

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԱՏՄ ղեկավարի մոտ 2018 թվականի օգոստոսի 28-ին կայացած  
քաղաքացիների ընդունելության արդյունքների վերաբերյալ

ՀՀ	Հաշվառման օրը	Անուն, ազգանուն	Հարցի համառոտ բովանդակությունը	Տրված հանձնարարականը	Արդյունքը
1.	14.08.2018	Խաչիկ Հովհաննիսյան	Աշխատանքի ընդունման հարցում աջակցություն ցուցաբերելու մասին	Հանձնարարվել է ՍԱՏՄ կադրերի բաժնի պետ Ա. Վարդանյանին՝ առկա քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների ցանկից առանձնացնել այն պաշտոնները, որոնց ներկայացվող պահանջներին կբավարարի քաղաքացին	Քաղաքացուն պարզաբանվել է, որ ՍԱՏՄ-ում գործում է քաղաքացիական ծառայության համակարգը, և մինչև մրցութային կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելը քաղաքացու դիմումի հիման վրա, պաշտոնի անձնագրի պահանջներին համապատասխանության դեպքում կնքվում է ժամկետային աշխատանքային պայմանագիր: Ուստի անհրաժեշտ է հետևել ՍԱՏՄ պաշտոնական կայքին, որտեղ պարբերաբար հրապարակվում են քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնների առկայության մասին հայտարարությունները
2.	16.08.2018	Սեյրան Բեգլարյան	Վարչական իրավախախտման գործի քննության վերաբերյալ	Հանձնարարվել է ՍԱՏՄ իրավաբանական վարչության պետ Ա. Ղազարյանին՝ կազմել պարտավորագիր և տուգանքի գումարի վճարման ժամանակացույց	Քաղաքացուն պարզաբանվել է, որ ՍԱՏՄ վերահսկողական գործառնությունների իրականացման շրջանակներում տարեկան ստուգումների պլանով հաստատված ցանկը հրապարակվում է ՍԱՏՄ պաշտոնական կայքում: Քաղաքացին իր արտադրական գործունեության բոլոր փուլերում պարտավոր է ապահովել ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխանությունը, և օրենքի նորմերի չիմացությունը չի ազատում պատասխանատվությունից: Առաջարկվել է տուգանքի գումարի վճարումը կատարել պարտավորագրի ժամանակացույցով՝ խրստագույնս պահպանելով սահմանված ժամկետները